8. ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմ

8.1. Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 63-2.3-35)

Օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցում է պետության կողմից համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման ընթացքի և պարտադիր լիազորությունների կատարման վերահսկման գործառույթներին: Բաժնի պետի հանձնարարությամբ ուսումնասիրում է համայնքների ղեկավարների առաջարկություններն ու դիտողությունները Մարզպետարանի, մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության վերաբերյալ: Բաժնի պետի հանձնարարությամբ ապահովում է Մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների ներդաշնակ գործունեությունը, լուծում է կազմակերպական այլ հարցեր: Տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, գործողություններն ու անգործությունը դատարանում բողոքարկելու նպատակով առաջարկություններ է ներկայացնում Բաժնի պետին:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

* բարձրագույն կրթություն,

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «ա» ենթակետում նշված համապատասխան աշխատանքային ստաժ (տե՛ս սույն հայտարարության 12.1 ենթակետին հաջորդող պարբերությունը),

* սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Մրցույթը կկայանա 05.11.2014թ.՝ ժամը 14^{30}-ին, Խորհրդի շենքում (ք. Երևան, Տերյան 89):